

161. ՊԸԵԼԵՆ ԱՂՈՒՄՆԸ ԱՍՏՈՒԾ ԿԱՂԵ

Մին մարթու մին կյիժ կնեգյ ա ինում։ Էտ մարթը կնգանան վրեր շատ զանհլանն տանում ա, թակում ա, քցում ծմրկնեն։ Կնեգյը մին օր ծմակումը մին վրեսկավ պեռնած օղտու վա պտահում։ Առաչն ա քցում, պիրում տոն, մարթին ծեն տում, թա՝ ա՛ մարթ, ա՛ մարթ, մին օղտ ըմ քթանչ, ղուզն իսաի յա, տուզն իսաի[1]։ Էտ մարթը քյինանմ ա օղտեն պեռնեն եշում, տրեսնում վրեսկե յա, եռեան կնգանը խանփում, թա՝ կարկուտ ա կյիլանկան, նի մրտ թուրումը, կլոխրտ ծասկում, վրեր թրչվիսվուչ։ Կնգանը տինում ա թուռնումը, կլոխը մին ժեժտավ ծասկում, կոտը յիրան ածում, հավերը յիրան անում, ըսկսում ըն տրկտրկցնելավ օտելը։ Կնեգյն էլ հվատում ա, թա կարկուտ ա կյամ, մարթը վրեսկեն կյեղում ա։

Ուղտատարը ուղտեն շոռ կյանլավ, հրցրփորց ընելավ կյամ ա էտ մարթին տոնը քթենում, էտ էլ թա՝ վրեչ օղտ ըմ տրեսալ, վրեչ վրեսկե։ Տա էտ մարթին յախան պեց չի թողում, ասդի յա տում, սուդան ծեն տալ տում։

Մարթը վրեր օղում ա քյինան սուդ, կնգանն ասում ա.—Տոնը-տոնը լանվ կրպահես։ Մարթը սուդումը մին քանի օր յրատանում ա, սուդը հանլան պրծած չի ինում, վրեր կնեգյը տոնը պուկում ա, խունջանավը կապում, շիլանկում, քյինանմ մարթին կոշտը։ Սուդեն

[1] Քեռքով ցույց է տալիս սապատն ու բեռը։

Մարթիքյը էտ կնգանը վրեր տրեսնում ըն, ճինանչում ըն։ Մարթն էլ թա յանի տինին տարը ռիսկ կանե՞ պեն յոր անե, վրեչ թաքուն անեմ, վրեչ աշկար, լոխ էն ա գունգումը։ Էտ մարթին վրեր պիտի փոնին, նատրցընին, պեց ըն թողում, քյինանմ ա ուրանց տոն։ Մին քանի տարե վրեր անց ա կենում, էտ պենը քյունենանում ա, վրեսկեն կյեղած տրեզան տունա ա անում, մրեթ-մրեթ տներ, պըլըտնե շինում, առոք-փառոք ապրում։